ՀՏԴ 82.09 *Գրականություն*

Միլվա Խաչատրյան, բ.գ.թ., դոցենտ
Արցախի պետական համալսարան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՔՆԱՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՆԳԱՀԱՐ

Սույն հոդվածում շեշտադրվում է այն փաստը, որ խորհրդային գրաքննության մամլիչը հաշվի չառնելով Հովհաննես Շիրազը եղավ այն բացառիկ քերթողը, ով իր «Ողբ Ղարաբաղի» երկով դարձավ Արցախի ազգային-ազատագրական պայքարի խիզախ զանգահարը: Նա եղավ այն բացառիկ քերթողը, ով կանխազգաց նաեւ ազգային-ազատագրական շարժման հասունացումը Արցախում:

Բանալի բառեր՝ *Շիրազ, պոեզիա, ազգային, ազատագրական, զանգահար, քաղաքականություն, գոյապայքար, միակ, եզակի, բացառիկ:*

Сильва Хачатрян, к.ф.н., доцент
Арцахский государственный университет:

ЛИРИКА ОВАННЕСА ШИРАЗА КАК ПРИЗЫВ К АРЦАХСКОМУ ОСВОБОДИТЕЛЬНОМУ ДВИЖЕНИЮ

В этой статье подчёркивается та мысль, что советская критика не учитывала того факта, что Ованнес Шираз является талантливым творцом, а его произведение «Причитание Карабаха» стал храбрым призывом к национально-освободительной борьбе Армении, призывом к нашему народу.

Ключевые слова: *Шираз, поэзия, национальное, освобождение, призыв, политика, выживание, единственное, уникальное, эксклюзивное.*

Silva Khachatryan, PhD, Associate Professor
Artsakh State University

HOVHANNES SHIRAZ'S LYRICS AS THE CALL FOR THE ARTSAKH LIBERATION MOVEMENT

Thus, this article emphasizes the fact that, without taking into account the Soviet censorship, Hovhannes Shiraz became the only creator, who became a brave caller by his "Sorrow of Karabakh" preparing the national -liberation movement.

Key words: *Shiraz, poetry, national, liberation, call, politics, survival, only, unique, exclusive.*

Արցախյան ազատագրական ազգապահ շարժումը, որը թեեւ սկիզբ առավ 1988թ-ի՝ պատմական դարձած փետրվարին, խոր ակունքներ ունի: Ինչպես հայտնի է շարժման առաջին փուլը 1960-ական թվականներին թափ առավ, երբ Արցախում ադրբեջանական դպրոցի ադրբեջանցի տնօրենը գլխատեց դպրոցահասակ հայ մանչուկին եւ թաղեց գյուղամերձ այգում: Ոճրագործությունը բացահայտվեց, ոճրագործը դատապարտվեց, սակայն ալեկոծված ժողովուրդը չհանդարտվեց. ոճրագործին վառեցին հենց ոստիկանական մեքենայի մեջ: Ծավալված ազգային-ազատագրական շարժումը, ցավոք, խեղդվեց արյան մեջ, հարյուրավոր հայեր նետվեցին բանտերը: Արցախի մտավորականներից շատերը ստիպված եղան դառնալ վտարանդի՝ ափսոսանքով պոկվելով հարազատ բնաշխարհից: Թե առաջին եւ թե երկրորդ փուլում Արցախի ազգային-ազատագրական շարժումը նախաշատրաստական երկարատեւ շրջան է անցել: Հայ մտավորականության սերուցքը մայր Հայաստանում եւ Արցախում մշտարթուն էր, թեեւ խորհրդային քարոզչամեքենան խլացնում էր ազգային խնդիրների մասին հնչած ցանկացած տեսակետ: ԽՍՀՄ-ը 20-րդ դարասկզբին Հայաստանից բռնազավթելով Արցախը եւ Նախիջեւանը կցեց Ադրբեջանին, իսկ հայկական Ջավախքը՝Վրաստանին, ԽՍՀՄ-ը ազգային սխալ, խտրական

քաղաքականություն էր վարում։ Իրականում եղբայրության կեղծ կոչերի աղմուկում հայաթափվում էր Հայոց հողը եւ վայ նրան, ով կհամարձակվեր բարբառել այդ մասին, արծարծել այդ թեման։ Ազգայնամոլի պիտակով հետապնդվում, բանտարկվում կամ աքսորվում էր։ Մինչեւ 1965 թվականը թվականները, ինչքան էլ ամոթալի է, չէր ոգեկոչվում 1915թ. ապրիլի 24-ին Թուրքիայի կողմից Արեւմտյան Հայաստանում ցեղասպանված մեկ ու կես միլիոն անմեղ ու խաղաղ հայերի հիշատակը, իսկ Արցախում՝ մինչև 1988 թվականի փետրվարը։

Ազգային ազատագրական շարժման ալիքը նախապատրաստվում էր առանձին ազգանվեր խիզախ անհատների եւ ցեղի ոգին իրենց արյան հյուլեռում կրող, ազգի ցավերով կիզվող սակավաթիվ գրողների կողմից, ովքեր տեսնելով ԽՍՀՄ հակազգային քաղաքականության աղետալի հետեւանքները հայ ժողովրդի համար սթափության զանգ էին հնչեցնում իրենց ստեղծագործություններում, որոնք թեեւ սովետական գրաքննության մամլիչով չէին անցնում, բայց հասնում էին ժողովրդին՝անտիպ, ձեռագիր։

Արցախում Լեոնիդ Հուրունցը ցավով ու ցասումով հյուսեց իր «Ինչպես հասցնեմ ճիչս սերունդներին» գիրքը, Վազգեն Օվյանը գրեց Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը մերկացնող ստեղծագործություններ(«Այս Ղարաբաղն է»)։

Հայաստանում դեռեւս մինչեւ 60-ական թվականները մշտարթուն էր ազգային մեծ վշտակիր, պահանջատեր եւ ըղձասաց Հովհաննես Շիրազը, ով հայտարարեց.

Ոչ ոք չի կարող երգս կաշառել,

Դեպի Մասիս է երթս աննահանջ,- ինչը ձեռնոց է՝ նետված պաշտոնական կեղծ քարոզչությանն ու ցեղասպանված մեկ ու կես միլիոն անմեղ հայերի մասին հանցագործ լռությանը։ Ազգային հանճարի մշտամորմոք սիրտը ոչ միայն կորուսյալ հայրենիք՝ Արեւմտյան Հայաստանում էր, այլեւ սովետական կեղծ բարեկամության աղմուկում թրքացվող Արցախում։ Թեեւ բանաստեղծի մուտքն արգելված էր Արցախ՝երգը հասնում էր՝անգամ ձեռագիր։ «Ողբ Ղարաբաղի»-ն խորհրդային բռնատիրության ժամանակաշրջանում Ադրբեջանին բռնակցված Արցախի մասին գրված եզակի երԿ է, որտեղ փաստորեն մերկացվում է ԽՍՀՄ վարած ազգային սխալ քաղաքականությունը, բերենք հատված.

«Բարեկամդ» որ քզ խլեց,

Էլ թշնամիդ բան կտա՞ քեզ

Թե լուռ մնա քար աշխարհը՝

Չարը Երեւանն էլ կտանի[1]։

Մերկացնում է նաեւ Ադրբեջանի քողարկված նենգ ու հայադավ քաղաքականությունը, դառնորեն հեգնելով կեղծ բարեկամության տակ թաքնված պանիսլամիստական նկրտումները։

Փոխել հայոց անունդ Արցախ՝

Օտար Ղարաբաղ են դարձրել։

Թրքազերին, հայկական բնակավայրերի անունները թրքական անվանումներով փոխելով, նպատակամիտված քաղաքականություն էր վարում։ Պատմական Հայքի 10-րդ նահանգ հայոց Արցախը յուրացնելու հեռահար ծրագրով անվանափոխվում էին Արցախի բազմաթիվ բնակավայրեր, ինչը չէր կարող վրիպել մասնատված հայոց հայրենիքի աննահանջ պահանջատեր Հովհաննես Շիրազի աչքից։ Բանաստեղծը տեղյակ էր, որ Արցախը արհեստականորեն հեռու էր պահվում մայր Հայաստանից, որպեզի, ինչպես նա նկատում էր, «Ողբ Ղարաբաղի»-ում, «մոռանա երգերն հայոց»։

Կոմիտասի երգից զատված՝

Քեզ չեն թողնի իշխան մնաս,

Քեզ կուլ կտան մուղամները,

Թառդ կառնեն, վայ Ղարաբաղ[2]։

Պարզ ասված է՝ Արցախը Հայաստանից հեռու պահելու նպատակը մեկն է՝կտրել հայության այդ հատվածին՝ իր հոգեւոր հայրենիքից եւ մայրենի լեզվից։ Բավական է նշել այն փաստերը, ո ոչ մի հեռուստաալիքով հնարավոր չէր լսել հայկական խոսք եւ, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում «հայ ժողովրդի պատմություն» առարկան արգելված էր

[1] Հովհ. Շիրազ, «Ողբ Ղարաբաղի», անտիպ

[2] Հովհ. Շիրազ, «Ողբ Ղարաբաղի», անտիպ

ուսումնական ծրագրում: Փոխարենը՝ «Ադրբեջանի պատմություն» մտացածին առարկան էր հրամցվում:

Հեռու Արցախից, մտահոգ Արցախի եւ Հայաստանից բռնազավթված մյուս նահանգների ճակատագրով, բանաստեղծը շիկացման է հասցնում իր խոսքը «դավաճան Վասակ» անվանելով իր հայրենիքը բզկտողներին.

Քանի հողերս ինձ չեք տվել,
Ձեզ ելուզակ պիտի ասեմ:
Ավարայրի Վարդան դառած,
Ես ձեզ Վասակ պիտի ասեմ[1]:

Եւ մարգարեանում է հայոց մեծ ըղձասացը. «Ա՜խ, երբ պիտի սուրբ ցասումով վեր բռունցքվեն ձեռքերն հայոց»,- կանխազգալով ազգային ազատագրական շարժումը Արցախում:

Հիրավի, տասնամյակներ հետո Արցախի շրջկենտրոններում եւ Ստեփանակերտում « «վեր բռունցքվեցին» հազաավոր ձեռքերն հայոց»՝ «Միացու՜մ մայր Հայաստանին» պահանջով եւ բարձրախոսներից ղողանջեց արցախահայությանը սթափության կոչող զանգը՝ «Ողբ Ղարաբաղի»-ն:

Ա՜խ, երբ պիտի ինչպես բանտից
Նախիջեւանի ձեռքից բռնած
Տուն գաս հավետ՝Մասիսի հետ,
Ղարսն ու Վանը ձեռքիցդ բռնած...
Որ ազգովի Մասիս ելնենք
Քարավանի ծայրից բռնած
Նորից ազգի ավազանում
Հայ մկրտվենք,
Հայոց Արցախ[2]:

Նույն հարթության վրա են 1915-ի ապրիլին ամայացած Արեւմտահայաստանն ու թրքազերիների գաղութային լծի տակ գտնվող Արցախը, որին սպիտակ եղեռնն էր սպառնում:

Այսպիսով, Հովհաննես Շիրազն իր «Ողբ Ղարաբաղի» երկով սթափության զանգ հնչեցրեց հայաթափվող Արցախում, դառնալով խիզախ ու աննահանջ միակ զանգահարը խորհրդահայ գրականության եւ իրականության մեջ: Նաեւ իրականության, քանզի, երբ Արցախից ուսանողներս մեծ բանաստեղծին հանդիպելու էինք գնում, առաջին հարցերը, որ հնչեցնում էր. «թուրքերը շատացե՞լ են Արցախում, նեղու՞մ են հայերին»,-սրանք էին: Ապա խիստ պահանջում էր՝ «Հայաստանում չմնաք, այստեղ սովորեք, գնացեք Արցախը հայ պահեք, դրանք կլցվեն եւ իրենցը կդարձնեն մեր երկիրը»:

Ահա այսպես, եւ գրականության, եւ իրականության մեջ Հովհաննես Շիրազը սթափության զանգ էր հնչեցնում ի լուր կեղծ բարեկամության նեյնիմների տակ նիրհած Արցախին՝ մշտարթուն լինելու եւ ազգային դիմագիծը պահելու համար պայքարի ելնելու:

Հայ գրականության Գարեգին Նժդեհը հանճարեղ ներքնատեսությամբ, ցեղի իմաստուն բնազդով զգում էր Արցախի նաեւ Հայաստանի մյուս մարզերին՝ Մասիսի, Ամասիայի, Նոյեմբերյանի թրքացման վտանգը, ինչպես նաեւ Արցախում հասունացող ազգային-ազատագրական փրկարար շարժումը: Հովհաննես Շիրազն իր հայրենաբաղձ գրականությամբ դարձավ Արցախի ազգային-ազատագրական շարժման բացառիկ զանգահարը:

ՀՏԴ 82-9 *Գրականություն*

[1] Նույն տեղում
[2] Հովհ. Շիրազ, «Ողբ Ղարաբաղի», անտիպ